Անոնց յայտնաբերումը մարտահրաւեր կ'ուղղէ նախապէս կատարուած ենթադրութիւններու, թէ որդերը մարդոց կը հասնին, եթէ միայն անոնք շան կողակցին դիմէ, եւ ցոյց կու տայ, թէ մարդիկ առաւելագոյն չափով աչալուրջ պէտք է ըլլան իրենց շունը լուալու եւ անոր որդերէն ձեռքազատելու իմաստով:

Մ. Նահանգներու մէջ տարեկան մօտաւորապէս 10 հազար հոգի, մեծամասնութեամբ՝ 12 տարեկանէ վար երեխաներ, կը վարակուին Թոքսոքարա քանիս որդով, որ շուններու աղիքին մէջ միջնէ 20 սմ. երկարութեան կը հասնի:

Վարակուած մարդոց մօտ որդերը կրնան ախտաբանական վնասներ, որոնք կրնան տեսողութեան ազդել կամ ուր կարծուիլ: Պարագայարար անոնք անախտաբան կը պատճառեն:

Եթէ անոնք լեարդին կամ թոքերուն նման այլ գործարաններու մէջ հասնին, կրնան նաեւ պատճառել Թոքսոքարաիտիս, որուն ախտանշաններէն է ծանրաչափով թմբկի ժամանակամիջոցներ:

Բրիտանացի 2 անասնաբուներու՝ Ալըն Ռայթի եւ Ալըն Ուելֆի հետազոտութիւնը ցոյց տուած է, որ կողակցը վարակումի միակ նման չէ: Անոնց քննած 60 շուններուն 25 առ հարիւրը որդին հակիթներէն կը կրէր մոթին մագերակ մէջ:

Մէկ միլիմետրոց հակիթները շատ կայուն են եւ կրնան դիւրաւ անցնիլ մէկու մը, որ անասունը կը շոյէ, կ'ըսէ «Ռայթ Նիլ Սայլըքսթը» բերթի Ապրիլի թիւերէն մէկուն մէջ: Շուններու սեփականատէրերը շան ձագերուն պէտք է որդի դէմ դեղ տան իւրաքանչիւր 2 շաբաթը անգամ մը՝ առաջին 3 ամիսներուն, ապա ամիսը անգամ մը՝ յաջորդ 3 ամիսներուն:

6 ամիս ետք շունը որոշ չափով բնական պաշտպանութիւն կ'ապահովեն, հետեւաբար անոնք որդի դէմ դեղի պէտք կ'ունենան 6 ամիսը անգամ մը եւ լուացուելու՝ 2 շաբաթը անգամ մը:

Ռայթի ամէնէն կարելի թելադրանքը շուն պահողներու համար այն է, թէ ճաշերէ առաջ եւ շունը շոյելէ ետք պէտք է ձեռքերը լուալ, նաեւ պէտք է առաւելագոյն չափով մաքրութեան հսկել, երբ երեխաներ տունը «կը բաժնեկցին» շուններու հետ:

Բրիտանիոյ մէջ որդով վարակումի վտանգը մարդոց համար շատ աւելի նուազ է, քան՝ Մ. Նահանգներու մէջ, տարեկան նուազ քան 20 հոգի, 60 միլիոն բնակչութեան մը մէջ, կ'ըսէ Ռայթ, մասամբ՝ որովհետեւ բնակչութեան շատեր բնական պաշտպանութիւն մշակած են մակաբոյժին դէմ՝ անոր յաճախակիութիւնը ենթակալ ըլլալէ ետք:

Երկարատեւներու միջոցով կը փոխանցուի եղջերանի մնացեալ առողջ բջիջներուն:

Յարդ հիւանդները, որոնք վրայ կատարուած են առաջին փորձարկումները, կրցած են գատորոշել առօրեայ գործածութեան առարկաներ, ինչպէս՝ գաւաթ մը կամ աման մը:

Այսուհանդերձ անոնք տակաւին իրենց սեփական աչքերով ամբողջովին «չեն տեսած» այդ առարկաները. պատկերները կ'առնուին վիտէօ նկարչական մեքենայի մը կողմէ, ապա կը զրկուին եղջերանի վրայ գետեղուած փոքրիկ սարքին, որ 4 միլիմետրով 5 միլիմետր չափով է:

Յարդ անիկա փորձարկուած է 3 հիւանդներու վրայ միայն:

Ինչպէս որ սովորական առարկաներ:

Յարդ սարքը սահմանափակ թիւով երկարատեւ կը կրէ, սակայն մասնագէտները կը յուսան, որ ապագային յաւելելու երկարատեւ կ'հիւանդներու «տեսողութիւնը» պիտի բարելաւուի:

Անիկա թիրախ ունի աչքի կարգ մը հիւանդութիւններ միայն, որ եղջերանի լոյս ստացող բջիջները մեռած են, սակայն անոնց յարմար խաւը կ'ազդող բջիջները, որոնք կը սկսին ուղեղին նշաններ զրկող գործընթացը, վնասուած չեն:

Երկարատեւները պարզապէս այդ բջիջներուն կը կապուին, առիթ տալով նկարներուն, որ ուղեղի ուղեղին զրկուին:

ԱԿՈՒԱՆԵՐԸ ՇԱՏ ՈՒԹԵՂ ԿԵՐՊՈՎ ՎՐՁԻՆԵԼԸ ԿՐՆԱՅ ԱՆՈՆՑ ՎՆԱՍԵԼ

Համաձայն տեղեկութեան եւ ի գործ դրուած ճնշումին:

Անոնք իրենց ակունքները վրձինած են 30 երկվայրկեանին 30 վայրկեան տեղեկութեամբ եւ 75 կրամէն 300 կրամի համապատասխանող ճնշում գործածած են:

Կամաւորները գործածած են երկարակաւ վրձիններ, որոնք կապուած են համակարգիչի մը, որ ժամանակի եւ ճնշումի վերաբերեալ չափեր առած է:

Հետազոտողները վրձինելէ առաջ եւ ետք փլաքի համեմատութիւնները արձանագրած են եւ՝ գտած, թէ փլաքի հանուրը հետեղողականօրէն բարելաւուած է վրձինելու տեղեկութեան եւ ճնշումի բարձրացումով:

Այսուհանդերձ անոնք գտած են նաեւ, որ երբ մարդիկ 2 վայրկեանէն աւելի կը վրձինեն՝ աւելի քան 150 կրամ ճնշումով, անոնք յաւելեալ փլաքէ չեն ձեռքազատել ակունքները:

Հետազոտողները կ'ըսեն, որ թէեւ կամաւորները երկարակաւ վրձին գործածած են, սակայն նոյն արդիւնքները պիտի ակնկալուէին, եթէ անոնք սովորական վրձիններ գործածած ըլլային:

Ուսումնասիրութիւնը զխաւորած հետազոտող փիթըր Հիսմըն կ'ըսէ, թէ ատամնաբուներու համաձայն, մարդոց մեծամասնութիւնը տակաւին ունի այն համոզումը, թէ որքան երկար եւ աւելի լաւ կ'ըլլան:


ԱԿՈՒԱՆԵՐԸ ՎՐՁԻՆԵԼՈՒ ԾԵՒԸ ՆՈՅՆՔԱՆ ԿԱՐԵՒՈՐ

Հիսմըն կը շեշտէ, որ ակունքները վրձինելու ձեւը նոյնքան կարեւոր է, որքան ինքնի վրձինելը: Մարդիկ, որոնք վստահ չեն թէ իրենց ակունքները ճիշդ ձեւով կը վրձինեն, պէտք է ատամ-

նարուծին խորհուրդին դիմեն, զիտել կու տայ ան:

Անկարելի է սովորական անձի մը համար չափել, թէ որքան ճնշում կը բանեցնէ ակունքներու վրձինելու ընթացքին, կ'ըսէ մասնագէտը:

«Օրինակ, այն ուժը, որ կը բանեցուի ակունքի վրձինին վրայ, կրնայ բաւական թիւթեւ ըլլալ, սակայն ճնշումը շատ աւելի մեծ կ'ըլլայ, որովհետեւ այդ ուժը կը բանեցուի շատ փոքր մասի մը վրայ», կը բացատրէ ան:



Ինքնափորձի «Սոնալան» ընկերութեան Շամպուրկի գործարանին մէջ մարդամեքենայ մը անօդային կը գործէ A4 չափով փաթեթուած թուղթի մը վրայ՝ 10,75 ժամ տեղադրութեամբ: Մարդամեքենան ինքնափորձի կը շարժ տարբեր անկիւններով՝ 45-էն 88 աստիճանի միջեւ, ապահովելու համար, որ անոնք հաւասար կերպով եւ ռանց մեկտի հոսքին դադարեցումին կը գրեն: Փորձարկումները տեղի կ'ունենան չիմարէն, ձափոններէն, գերմաներէն, ֆրանսերէն եւ անգլերէն լեզուներով:

ԿՈՅՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԽՈՍՏԱՆԱԼԻՑ ՆՈՐ ՄԻՋՈՑ ԵՐ

Կարգ մը կոյր հիւանդներ մօտ ատենէն թերեւ կարելիութիւնը պիտի ունենան գէթ մասամբ իրենց տեսողութիւնը վերագտնելու:


Ամերիկացի հետազոտողներ հիւանդներու

Բրիտանացի մասնագէտներ կը զգուշացնեն, թէ մարդիկ, որոնք իրենց ակունքները շատ ուժեղ կերպով եւ շատ երկար ժամանակ կը վրձինեն, կրնան մնալու վնաս հասցնել անոնց:

Նիւթեթիւրը համալսարանին հետազոտողներ կ'ըսեն, թէ գրեթէ փաստ չկայ, որ աւելի ուժեղին եւ աւելի երկար վրձինելու ակունքները աւելի մաքուր կը դարձնեն:

Ընդհանրապէս, անոնք գտած են, թէ նման սովորութիւններ կրնան ակունքները պաշտպանող խաւին եւ լինտերուն վերջնականօրէն վնասել: Անոնք կ'առաջարկեն, որ մարդիկ 2 վայրկեան վրձինեն իրենց ակունքները՝ ճնշումով մը, որ պէտք է համապատասխանէ 150 կրամ կշռող նարինջի մը ծանրութեան:

Մասնագէտները 4 շաբաթ ուսումնասիրած են 12 կամաւորներ, որոնք իրենց ակունքները վրձինելու 16 տարբեր ձեւեր փորձարկած են:



Այս ակունքի վրձինները արձանագրուած վրայ 40 հազար սմ գամետ-առաջ կ'ըքուին, բերանին մէջ պնոստերը 3 ամիս վրձինելու «կեղծելով»: Ակունքները կը գտնուին լորձուցիւն գման ցիւթի մը մէջ: Փորձարկումները, որոնք տեղի կ'ունենան (այս պարագային) Փարիզի Ազգային Փորձարկումի Գիտաշխատանոցին մէջ, Էթ յաջողից, վրձինները ֆրանսական «ԷՄ. ԷՄ» (NF) գնացուց կը կրեն՝ երաշխաւորելով անոնց որակը:

Պատրաստեց՝ Ս. Ա. ՊՈՅԱԾԵԱՆ (Աղբիւրներ՝ «ՊԻ. ՊԻ. ՍԻ.», «ՈՈՅԹԸՐԸ», «ԱՅՓ» եւ «ԷՅ. ՓԻ.»)

ԱՖՀԻԼ AFHIL



ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE




- AT HOME**
- Wheelchair
 - Walker
 - Electric Bed
 - Manual Bed
 - Water Mattress
 - Cans
 - Sticks
 - Serum Tripod
 - Walking Frame

- Over Bed Table
 - All Kinds Of Oxygen
- We Also Provide
- Laboratory service.
 - Physiotherapist
 - Nurses Aids
 - P.T.S. (AMBULANCE)

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ՅՈՒՑԱՍՐԱՇ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԵՐ ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՅՇԽԼ, ԱՅՇԻՏ ԶԵԼԵ, Բ. ՅԱՐԿ ԵՆՈ. (01) 242553/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.



«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՍՏԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազ օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:00:

ՄԱՀԱԶԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահագոյ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5541 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										


- | | |
|--|---|
| 1. Եղջերունքը ցեղէն լեռնային կենդանի: | 1. Գիտելիքներու ամբողջութիւն - Մէկ: |
| 2. Վանի հին անուններէն - Կինք: | 2. Խորձուձ - Արական օտար անուն: |
| 3. Փորձանք - Ունայն, պարագ: | 3. Աղետար, ցաւալի - Արական օտար անուն: |
| 4. Յունական կողմնակ: | 4. Յարդանկոյին - Մարդարանութիւն: |
| 5. Գեղատեսիլ տերեւներով բոյս - Արական անուն: | 5. Սաթիր - Չայնանի: |
| 6. Կանացի ուսանող - Գնդածե (Հակ.) - Չայնանի: | 6. Իրերայաջորդ տանու - Չայ: |
| 7. Կիտուած - Չիւթ: | 7. Իգական օտար անուն - Ափրիկեան երկիր: |
| 8. Կրկնուած բաղաձայններ - Անադարտ: | 8. Անկարող - Շպլեդ: |
| 9. Շրջագիծ: | 9. Իոտ - Կրկնուած գիրքեր - Կոզմ: |
| 10. Միւս - Լիբանանահայ մամուլէն: | 10. Միջերկրականեան մայրաքաղաք - Տարածքի միաւոր: |
| 11. Երկկամուրջ - Քուն: | 11. Պարզեւ - Այրուրենէն - Գրկից տառեր: |

ԹԻՒ 5540

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	U	U	U	U	U	U	U	U	U	U
2	T	T	T	T	T	T	T	T	T	T
3	S	S	S	S	S	S	S	S	S	S
4	U	U	U	U	U	U	U	U	U	U
5	U	U	U	U	U	U	U	U	U	U
6	U	U	U	U	U	U	U	U	U	U
7	U	U	U	U	U	U	U	U	U	U
8	U	U	U	U	U	U	U	U	U	U
9	U	U	U	U	U	U	U	U	U	U
10	U	U	U	U	U	U	U	U	U	U



bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուֆի սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթակի 28,85 - 29,05 լ.ն.
 Քուէյթեան տինար 5055,00 - 5080,00 լ.ն.
 Յորդանանեան տինար 2121,00 - 2131,00 լ.ն.
 Պահրէյնեան տինար 3985,00 - 4010,00 լ.ն.
 Ա.Մ.Էմիրութեան տինար 410,75 - 412,75 լ.ն.
 Քաթարեան ռիալ 413,75 - 415,75 լ.ն.
 Մեյուտական ռիալ 402,00 - 404,00 լ.ն.
 Օմանեան ռիալ 3895,00 - 3920,00 լ.ն.
 Եգիպտական կիւնէ 229,00 - 239,00 լ.ն.
 Անգլիական սթերլին 2416,00 - 2426,00 լ.ն.
 Չուիցերիական ֆրանք 1092,00 - 1097,00 լ.ն.
 Թրքական լիրա 109,00 - 109,50 լ.ն.
 Կիպրական փաունտ 2900,00 - 2925,00 լ.ն.
 Ճափոնական հայար եէն 12,75 - 12,85 լ.ն.
 Ամերիկեան տոլար 1501,00 - 1515,00 լ.ն.
 Քանադական տոլար 1100,00 - 1105,00 լ.ն.
 Աստրալիական տոլար 995,00 - 1000,00 լ.ն.
 Եւրօ 1702,00 - 1712,00 լ.ն.

- ՈՍԿԻ
 - Անգլիական մէկ ոսկի 145,000 - 150,000 լ.ն.
 - Իրանեան մէկ ոսկի 131,000 - 136,000 լ.ն.
 - Օսմանեան մէկ ոսկի 121,000 - 126,000 լ.ն.
 - Մեքսիքական փէտոս 695,000 - 715,000 լ.ն.
 - Մէկ քիլոկրամ
 - ձոյլ ոսկի 18,120,000 - 18,320,000 լ.ն.
 - Մէկ օսն ոսկի 375,00 - 375,50 \$
 - Մէկ օսն արծաթ 5,17 - 5,19 \$
- Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.
 - Եւրօ 1.1285 - 1.1289
 - Քանադական տոլար 1.3684 - 1.3689
 - Չուիցերիական ֆրանք 1.3796 - 1.3801
 - Ճափոնական եէն 117.43 - 117,48
 - Մէկ սթերլին 1.6040 - 1.6044

Մէկ փոլար 555 դրամ

• ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

ԳԻՆԻ Ա. 62 դրամ ԳԻՆԻ Բ. 62 դրամ

Ա. կարգ	4,38	4,38
Բ. կարգ	4,45	4,43

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՈ. 01-252852

★ Ի՞նչ կը քսեն ԱՍՏՂԵՐԸ ★

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
 Ոչ մէկ համաձայնագիր կնքեցէր դրամական վարկ հայրաքայրը ընկերութեան մը հետ: Նախքան այս ստորագրութիւնը՝ կարծիքը առէք ձեր շրջանակի մասնագէտներուն եւ ձեր հարազատներուն:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
 Մրցարկ մը յառաջդիմութիւն մը պիտի արձանագրէ՝ շնորհիւ ձեր մէկ բարեկամին միջամտութեան: Երախտագետ եղէք այդ անձին նկատմամբ: Օրը բարի է, շահաւէտ:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)
 Առանձնութեան մէջ ապրելու վիճակը հանելի չի բուրիք ձեզի, որովհետեւ այդ ապրելածեւր ծանր կը կշռէ ձեզի: Ուրեմն միացէք ձեր բարեկամներուն, որպէսզի օրը անցնի գուարթ:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
 Պիտի գնահատէք պաշտօնակից մը, անոր նուիրումը եւ հասարակաց կետեր պիտի գտնէք ձեր եւ իր միջեւ: Լաւ բարեկամութիւն մը արդէն սկսած է ձեր միջեւ:

ԱՌԻԻՄ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
 Եթէ ոեւէ մէկը ձեզի առաջարկէ նոր պաշտօն մը՝ զայն գովելով, մի՛ ընդունիք, որովհետեւ ան պիտի նմանի բունաւոր նուէրի մը: Եղէք իմաստուն:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
 Եթէ կը սպասէք հարցի մը արդար պատասխանին, այսօր պիտի ստանաք այդ լաւ լուրը: Օրը իրեն հետ պիտի բերէ հանելի եւ օգտակար անակնկալներ: Զուարճացէք:

ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
 Պատրաստ էք ընդունելու ձեր պատրաստած ծրագիրին պահանջած բոլոր գոհողութիւնները: Եթէ վստահ չէք, հետու կեցեք մնացեալ կեանքի հարցերէ:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
 Կարեւոր աշխատանք մը մտոցած էք կատարելու: Վերջիցեք զայն ու անմիջապէս ըրէք պէտք եղածը՝ առաջին ժամանակէն ինչպէս պիտի ընդունուի:

ԱՂԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
 Մի՛ յետաձգէք ձեր բժիշկին կամ անասնաբուծին հետ որոշուած ժամադրութիւն մը: Ետքը կը գոջաք: Յիշեցէք իմաստուն խօսքը, որ կ'ըսէ. «Այսօրուան գործը վաղուան մի՛ ձգէր»:

ԱՅԾԵՂՋԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
 Մարզանքի պէտք ունիք. եթէ առանձին չէք կրնար մարզանք կատարել, արձանագրուեցէք մարզական ակումբի մը, ուր պիտի ունենաք նաեւ բարեկամներ:

ՄՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)
 Ուշադիր եղէք տեղային աշխատանքներ կատարելու պահուն, մանաւանդ՝ լեկտրապահ գործիքներու հետ աշխատելու ատեն: Խնամքով պահեցէք ձեր արժեքաւոր առարկաները:

ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
 Պէտք ունիք լաւ կեցողութեամբ, որպէսզի ըմբռնէք ձեզի բացատրուած հարցերը: Բայց ի վերջոյ պիտի համոզուիք ձեզի արուած խորհուրդներուն:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱՇԵՐՉՈՒԹԻՒՆ

ՃԱՇԱՏԵՂԱՆԻ ՅԱՐԴԱՐՄԱՆ ԱՐՈՒԵՍԸ «ՄԱՆԺՕՆ ՏԻՉԱՅՆ»Ի ԸՆԴՄԵՉԷՆ

Ճաշատեղանի յարմարման արուեստին նուիրում ճուշահանդէսներու եւ նախաձեռնութիւններու շարքով մը «Թապլ Ռապ» հաստատութիւնը կը նպատակարարէ քաջալերել կիրառական արուեստի եւ մասնաւորաբար յարդարման արուեստի ասպարէզը որդեգրած Լիբանանի եւ Միջին Արեւելքի մէջ բնակող երիտասարդ արուեստագէտներ:

Յատկապէս վերջին տասնամեակին Լիբանանի մէջ լայն տարածում գտած յարդարման արուեստը կը սահմանափակուի կահոյքի ցուցարահներու մէջ: Այս միջոցառումները կը միտին յարդարման արուեստին տալ ինքնուրոյնութիւն, պայն անջատել կահոյքի մարզէն եւ այս մարզին մէջ աւելցնել երիտասարդ նախաձեռնողներու ներդրումը:

Ձեռնարկներու այս շարքը կը կրէ «Մանժօն տիպայն» խորագիրը: Անոնք կ'երկարին 15 - 18 Սեպտեմբեր եւ կ'ընդգրկեն ցուցահանդէսներ, դասախօսութիւններ եւ պրոյեկտներ: Այս վերջինները կը կեդրոնանան քաղաքապետի երկիրներու մէջ յարդարման արուեստին վրայ տնտեսութեան ունեցած ազդեցութեան:



Ձեռնարկներու այս շարքը կը կրէ «Մանժօն տիպայն» խորագիրը: Անոնք կ'երկարին 15 - 18 Սեպտեմբեր եւ կ'ընդգրկեն ցուցահանդէսներ, դասախօսութիւններ եւ պրոյեկտներ: Այս վերջինները կը կեդրոնանան քաղաքապետի երկիրներու մէջ յարդարման արուեստին վրայ տնտեսութեան ունեցած ազդեցութեան:

Յարմարման արուեստի ցուցահանդէս «Մանժօն տիպայն», Փրանսական Մշակութային կեդրոնին մէջ տեղի ունեցող «Մանժօն տիպայն»ը «Թապլ Ռապ» հաստատութեան կողմէ կը կազմակերպուի յաջորդաբար շրորող տարիներու միջեւ: Ան կը ներկայացնէ Լիբանանէն եւ միջինարեւելեան երկիրներէն եկած շուրջ երկու տասնեակ արուեստագէտներ: «Մանժօն տիպայն» կը գործակցի նաեւ լիբանանեան համալսարաններու յարմարման արուեստի բաժանմունքներուն հետ:

Ինչ կը վերաբերի համանուն ցուցահանդէսին, որ կը շարունակուի մինչեւ 3 Հոկտեմբեր, ապա անոր կը մասնակցին միջինարեւելքի եւ եւրոպացի 9 արուեստագէտներ:

ԱՅՍՕՐ

- Յարդարման արուեստի ցուցահանդէս՝ «Մանժօն տիպայն», Փրանսական Մշակութային կեդրոն, մինչեւ 3 Հոկտեմբեր:
- Պէյրուֆի փողոցի փառատօն Բատերախաղ՝ «Ուա Քալմեօ», ժամը 18:30ին, Նըժմէ հրապարակ:
- Թատրոն՝ «Ֆիլ Սամա», ժամը 20:30ին, «Ալ Մատինա» Բատերախաղ, մինչեւ 27 Սեպտեմբեր:
- Նկարչական ցուցահանդէս Նագիր Իսմայիլի գործերը, «Աթալ» արուեստի ցուցարահ, մինչեւ 21 Սեպտեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Վիզաժ», «Ժամին Ռուպէլ» ցուցարահ, մինչեւ 26 Սեպտեմբեր:
- Լուսանկարչական ցուցահանդէս՝ Ռիչի Նագալի գործերը, «Ջինք» ցուցարահ:
- Գեղանկարչութեան եւ քանդակագործութեան սիմփոզիում, Ժուլիէի հին շուկայ, մինչեւ 20 Սեպտեմբեր:

ԱԶԳԱԿ 50 ՏՄԻՒ ԱՌԱՋ
 16 Սեպտեմբեր 1953

ԻՐԱՆԻ ՆՈՐ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՒ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ



Թեհրանի Թեմական խորհուրդին եւ եկեղեցական վարչութեան կարգադրութեամբ, Կիրակի 30 Օգոստոսին, Ս. Աստուածածին Մայր եկեղեցիին մէջ, Կ. Երկրայտեան ստուարաբար քաղաքական մը եւ քահանայներու ամբողջ ղապին, հանդիսաւոր մարթանք կատարուեցաւ Մոհամեդ Ռիզա Փահլաւի շահի արեւշտութեան համար: Այս առիթով նա մը խօսեցաւ Յովհաննէս Ա. քահանայ. Հանգանձն երկայացնելով իրանահայութեան հաւատարմութիւնը վեհապետին եւ կառավարութեան նկատմամբ:

Ապա մասնաւոր պատուիրակութիւն մը գնաց Սպայից ակումբը, վարչապետ գոր. Ջահեմիին իրանահայութեան անկեղծ գագուցները եւ հաւատարմութիւնը յայտնելու: Յանուն պատուիրակութեան խօսեցաւ Աբրահամ Ասատրեան՝ քարգ-

մանը հանդիսանալով հայ համայնքի լաւագոյն զգացումներուն հանդէպ շահին եւ նոր կառավարութեան, եւ յայտնելով, թէ իրանահայութիւնը պատրաստ է նեցուկ հանդիսանալու երկրի պաշտպանութեան:

Վարչապետը՝ գոր. Ջահեմի, պատասխանեց, թէ «Մենք շատ լաւ գիտենք, որ իրանահայութիւնը միշտ ալ օգտակար դեր ունեցած է, ցուցադրած է զոհաբերութեան ոգի: Եթէ փորձամասնութեան մէջ մէկ երկու հոգի սխալ ընթացք ունեցած են, այդ չի վերաբերի բոլորին: Մեր բոլորին պարտականութիւնն է ձեռք ձեռքի ծառայել երկրին բարօրութեան: Կը ցաւով, որ զբաղած ըլլալով՝ կարելի չեղաւ անելի երկար խօսակցութիւն ունենալ ձեզի հետ: Եթէ որեւէ խնդիր ունենաք, կրնաք դիմել ինձի. միշտ պիտի արժանանաք լաւագոյն ընդունելութեան»:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Ն



ՃԱՏՐԱԿ

ԱՅՍՕՐ ԿԸ ՄԿՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՂՈՑ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

Այսօր՝ Երեքշաբթի Երեւանի մէջ կը սկսին Հայաստանի ճատրակի տղոց ախոյեանութեան մրցումները, որոնց իրենց մասնակցութիւնը կը բերեն տասը վարպետներ: Անոնք են. Կարէն Ասրեան, Գարրիլ Սարգսեան, Աշոտ Անաստասեան, Արտաշէս Մինասեան, Արսէն Եղիազարեան, Տիգրան Պետրոսեան, Գէորգ Յարութիւնեան, Արման Փաշիկեան, Բենիամին Գալստեան եւ յատուկ արտօնութեամբ՝ Լիլիթ Մկրտչեան:

Հայաստանի ճատրակի ֆետերասիոնին խաղազմաւորն է Զարգարեան, երկէ իր կատարած յայտարարութեան ընթացքին ըսաւ, որ Սմբատ Լպրտեան եւ Վլատիմիր Յակոբեան ախոյեանութեան չեն մասնակցիր, երկրէն դուրս ըլլալուն պատճառով, մինչ Լեւոն Արոնեան եւ Ռաֆայէլ Վահանեան, որոնք կը բնակին Գերմանիա, իրենց մասնակցութիւնը պիտի բերեն միջազգային այլ մրցաշարքի մը:

Ինչ հանգրուան ընդգրկող այս մրցաշարքին աւարտին, առաջին հինգ դիրքերը գրաւողները պիտի ստանան նիւթական պարգեւներ, հետեւեալ ձեւով. Ախոյեան՝ մէկ միլիոն երկու հարիւր յիսուս հազար դրամ, փոխ ախոյեան՝ ինը հարիւր հազար դրամ, Յորդ դիրք՝ հինգ հարիւր հազար դրամ, Քոր դիրք՝ երեք հարիւր հազար դրամ եւ Յորդ դիրք՝ երկու հարիւր հազար դրամ:

ՔԱԼՉԻՑ

ԵՌՈՎԷ ԵՒ Ա. ԷՍ. ՌՈՄԱ «ԿԸ ԹՈՒՉԻՆ»

Իտալիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Քալչիո) շրջանակներէն մրցումներուն, հինգ կապուեր միայն՝ Ա. Էս. Ռոմա, Եովենթոն, Լացիո Ռոմա, Ա. Սէ. Միլան եւ Ինթեր Միլան յաջողեցան արձանագրել եղանակի իրենց երկրորդ յաղթանակը, ապահովելով՝ առաւելագոյն վեց կէտերը:

Ստորեւ՝ շրջանակներէն մրցումներուն արդիւնքները.

Քիեւո - Եովենթոն	1-2
Էմփոլի - Ռեճինա	1-1
Լեչէ - Անքոնա	3-1
Մոտենա - Ռատինգե	0-1
Փարմա - Փերուճիա	3-0
Ա. Էս. Ռոմա - Պրեշիա	5-0
Սիենա - Ինթեր Միլան	0-1
Ա. Սէ. Միլան - Պոլոնիա	2-1
Սամպորիա - Լացիո Ռոմա	1-2
ԴԱՍԱՒՈՐՈՒՄ	ԿԷՏ
1.- Ա. Էս. Ռոմա	6 (7-1)
2.- Եովենթոն	6 (7-2)
3.- Լացիո Ռոմա	6 (6-2)
4.- Ա. Սէ. Միլան	6 (4-1)
5.- Ինթեր Միլան	6 (3-0)
16.- Պրեշիա	1 (1-6)
17.- Մոտենա	0 (0-3)
18.- Անքոնա	0 (1-5)

ԱՆԳՆՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐՍԵՆԱԼԻ ԱՌԱՋԻՆ «ՉԱԽՈՂՈՒԹԻՒՆԸ»

Անգլիոյ ֆուտպոլի ախոյեանութեան Յորդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Արսենալ կորսնցուց եղանակի իր առաջին երկու կէտերը, երբ 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց իր հիւրին՝ Փորթսմութի հետ:

Ստորեւ՝ Յորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Արսենալ - Փորթսմութ	1-1
Պլեյբլոք - Լիվերպոլ	1-3
Պրեմեր - Միտլդլի	2-0
Չարլթոն - Մանչ. Եունայթըտ	0-2
Չելսի - Ռեքսեմ	4-2
Էվերթոն - Նիւքասլ	2-2
Սաութհեմթոն - Վուլվ	2-0
Պրեմիեր Ֆուլհեմ - Ֆուլհեմ	2-2
Մանչ. Սիթի - Ասթոն Վիլա	4-1
ԴԱՍԱՒՈՐՈՒՄ	ԿԷՏ
1.- Արսենալ	13 (11-3)
2.- Մանչ. Եունայթըտ	12 (9-2)
3.- Մանչ. Սիթի	10 (12-6)
4.- Չելսի	10 (10-6)
5.- Փորթսմութ	9 (8-3)
18.- Լայպըր Սիթի	2 (4-7)
19.- Միտլդլի	1 (4-12)
20.- Վուլվ	1 (1-12)

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԷՅ ԳՐԱԲԵՅ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԸ

Ֆրանսայի ֆուտպոլի ախոյեանութեան Յորդ հանգրուանի մրցումներուն, Մարսէյ իր դաշտին վրայ 5-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնելէ ետք Լը Մանսը, գրաւեց ընդհանուր դասարանի պարագլուխի դիրքը:

Ստորեւ՝ Յորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Լիոն - Օքսէն	1-1
Պարիս - Կեմկան	4-2
Պրոտո - Սոչո	1-3
Լիլ - Մոնպեր	1-1
Մարսէյ - Լը Մանս	5-0
Մեո - Մոնփելիէ	2-1
Նիս - Նանթ	1-0
Ռեյմս - Լանս	2-0
Սթրասբուրկ - Ամպուի	3-2
Փարիզ Մէն ժերմէն - Թուլուզ	2-1
ԴԱՍԱՒՈՐՈՒՄ	ԿԷՏ
1.- Մարսէյ	15 (11-2)
2.- Մոնպեր	13 (11-6)
3.- Լիլ	11 (8-4)
4.- Նիս	11 (7-5)
5.- Սթրասբուրկ	10 (11-7)
18.- Կեմկան	4 (5-10)
19.- Թուլուզ	2 (2-9)
20.- Լը Մանս	2 (1-11)

ՍՊԱՆԻՅԱԿԱՆ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏ ՏԱՊԱԼԵՅ ՎԱՅԱՏՈՒԹՅՈՒՆ

Սպանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան Յորդ հանգրուանի մրցումներուն, Տեփորթիո Քորուսա յաղթանակ մը եւս արձանագրելով, միակ խումբն ըլլալով ապահովեց առաւելագոյն ինը կէտերը:

Ստորեւ՝ Յորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Օսասունա - Աթլետիկո Մադրիտ	4-0
Աթլետիկո Պիլայա - Մայորքա	1-2
Էսպանիոլ - Վիարեալ	1-0
Վալենսիա - Մալայա	1-0
Ռէալ Մարալոնա - Մուրսիա	3-0
Ալպաստէր - Պարսելոնա	1-2
Ռէալ Մադրիտ - Ռէալ Վալադոլիտ	7-2
Սելթա Վիլո - Ռէալ Պէթիս	0-2
Սեւիլլա - Տեփորթիո Քորուսա	1-2
Ռասիոն Կանտանիլ - Ռէալ Սոսիեդադ	0-1
ԴԱՍԱՒՈՐՈՒՄ	ԿԷՏ
1.- Տեփորթիո Քորուսա	9 (5-1)
2.- Ռէալ Մադրիտ	7 (10-4)
3.- Պարսելոնա	7 (4-2)
4.- Վալենսիա	7 (3-1)
5.- Օսասունա	6 (3-1)
18.- Մուրսիա	2 (2-5)
19.- Մալայա	1 (0-5)
20.- Ալպաստէր	0 (1-5)

ՉԵՄՓԻՆՉ ԼԻԿ

ԱՅՍՕՐ՝ ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏ - ՄԱՐՍԷՅ ՏԱԲ ՃԱԿԱՏՈՒՄ

«Չէմփրնզ Լիկ»-ի 2003-2004 եղանակի Ա. հանգրուանի մրցումները կը սկսին այսօր, երբ տեղի կ'ունենան ութ ճակատումներ՝ Ե., Զ., Է. եւ Ը. խմբակներէն ներս: Վաղը կ'աւարտուին վրայ եւս կան ութ մրցումներ՝ Ա., Բ., Գ. եւ Դ. խմբակներէն ներս:

Այսօրուան մրցումներուն ամէնէն աւելի հետաքրքրականը պիտի ըլլայ «Սանթիակո Պէննակ»-ի մէջ տեղի ունենալիք ճակատումը, ուր Ռէալ Մադրիտ պիտի հիւրընկալէ Մարսէյը: Իսկ վաղը կ'աւարտուին ճակատումները, որոնք ընթացքին Արսենալ կը ճակատուի Ռէալ Մադրիտի հետ:

- **ԱՅՍՕՐ**
- Ե. ԽՄԲԱԿ**
Ռէյնըրը (Սկոտլանդ) - Շթուկարթ (Գերմանիա)
Մանչեսթըր Եունայթըտ (Անգլիա) - Փանթիմալ (Յունաստան)
- Զ. ԽՄԲԱԿ**
Ռէալ Մադրիտ (Սպանիա) - Մարսէյ (Ֆրանսա)
Փարիզի Գեմկան (Սերբիա) - Փորթո (Փորթուգալ)
- Է. ԽՄԲԱԿ**
Սփարթա Փրակա (Չեխիա) - Չելսի (Անգլիա)
Պեշիքթաշ (Թուրքիա) - Լացիո Ռոմա (Իտալիա)
- Ը. ԽՄԲԱԿ**
Ա. Սէ. Միլան (Իտալիա) - Այաքս Ամսթըրտամ (Հոլանտա)
Ֆ. Ք. Պրիւժ (Պելճիքա) - Սելթա Վիլո (Սպանիա)

ՎԱՐՆԵՐ

- Ա. ԽՄԲԱԿ**
Լիոն (Ֆրանսա) - Անտըրքիտ (Պելճիքա)
Պայերն Միլնիթ (Գերմանիա) - Սելթա Վիլո (Սպանիա)
- Բ. ԽՄԲԱԿ**
Տիմոն Գիլ (Ուրուգուայ) - Լոքոմոթիվ Մոսկու (Ռուսիա)
Արսենալ (Անգլիա) - Ինթեր Միլան (Իտալիա)
- Գ. ԽՄԲԱԿ**
Ա. Սէ. Միլան (Իտալիա) - Սեփորթիո Քորուսա (Սպանիա)
Փ. Ս. Վ. Այնտըրքիտ (Հոլանտա) - Մոնպեր (Ֆրանսա)
- Դ. ԽՄԲԱԿ**
Եովենթոն (Իտալիա) - Կայպասիա (Թուրքիա)
Ռէալ Սոսիեդադ (Սպանիա) - Օլիմպիկոս (Յունաստան)

ՊԱՍԵՆՈՒՄ

ԼԻԹՎԱՆԻԱ՝ ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ



Լիթվանիոյ մարզիչ՝ Անթանաս Սիլեյշա, որ իր մարզիկներուն կողմէ կը բարձրացուի դէպի վեր

Եւրոպայի պասքէթպոլի ախոյեանութեան աւարտական մրցումին, անցեալ շաբաթավերջին Լիթվանիա հանդիսացաւ ախոյեան, երբ 93-84 արդիւնքով պարտութեան մատնեց Սպանիան: Հակառակ իր կրած այս պարտութեան Սպանիա, ախոյեան՝ Լիթվանիոյ եւ Իտալիոյ հետ ապահովեց 2004 Ռոհիմպիականի մրցումներուն իր տոմարը, որ տեղի պիտի ունենայ Աթէնքի մէջ (Յունաստան): Յորդ դիրքի մրցումին Իտալիա 69-67 արդիւնքով պարտութեան մատնեց Ֆրանսան:



Լիթվանիոյ աղջկանց զոյգի ախոյեան՝ Լարա Բէլչեպաշեան եւ Լիդա Պարիքեան, որոնք իրենց բաժակը կը ստանան Լիթվանիոյ փոխ Ֆետերասիոնի նախագահ Միշէլ Տը Շատարեւեանէն



Չ. Մ. Ը. Մ.ի մարզիկները՝ իրենց շահած բաժակներով եւ մետալներով



1992-1993 թ. մրցումը դասակարգին մէջ ախոյեան հանդիսացած Ալո Մունըռլեան



1986-1987 թ. մրցումը դասակարգին մէջ Չ. Մ. Ը. Մ.ի բաժակ ապահոված Մալէր Թաուլի



Խառն զոյգի ախոյեան հանդիսացած Լարա Բէլչեպաշեան եւ Ռաշիտ Պրայս

ՌԻԼԻԸՄՍ ՔՈՅՐԵՐՈՒՆ ԵՐԷՅԸ ՍՊԱՆՆՈՒԱԾ

Սերենա եւ Վիլյա Ռիլիւմսի երէց քուրը՝ Եթանտէ Փրայս (31 տարեկան) երէկ կոհ գնաց ունիւնը, երբ Քալիֆորնիոյ (Մ. Ն.) մէկ շրջանին մէջ անծանօթի մը կողմէ կրակոցի ենթարկուեցաւ: Հակառակ անոր որ փոխադրուեցաւ հիւանդանոց, սակայն հոն մահացաւ: Ոստիկանութիւնը յայտնեց, թէ ձեռքարկուած է կասկածելի մը՝ Աարոն Մալքըլ Վեմըր անունով: Երկու այլ կասկածելիներ եւս կը հետապնդուին ոստիկանութեան կողմէ:

ՄԵՌՏԱԿԱՆ ԲԱՆՏԻ ՄԸ ՄԵՋ ՀՐԳԵՀ ՄԸ ԿԸ ԽԼԷ ՏԱՍՆԵԱԿՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԸ

Մեռտական Արարիոյ ամէնէն ընդարձակ բանտին մէջ երէկ ծագած հրդեհ մը իսկ 67 բանտարկեալներու կեանքը, պատճառելով նաեւ 20 վիրաւոր, յայտարարեց բանտին ապահովութեան պատասխանատուն:

Լոնտոն հաստատուած սէնտակալ ընդդիմադիր կազմակերպութիւն մը, որ առաջին անգամ հաղորդած էր հրդեհին լուրը, յայտնեց, որ ապահովական վստահելի ազդեցիկներու համաձայն, հրդեհին գոհ գացած են 144 բանտարկեալներ եւ 40 ապահովական պաշտօնատարներ, ինչ որ կրկնապատկէն է պետական աղբիւրներու հաղորդած թիւին:

ԱՊՏԱԼԼԱ Բ. ՇԱՍԱԻ ՌԻԱԶԻՆԿՅՈՐԸՆ

Յորդանանի Ապտալլա Բ. թագաւորը հնգօրեայ պաշտօնական այցելութեան մը համար Միացեալ Նահանգներ ժամանեց երէկ: Ուաշինկթընի մէջ կատարած իր առաջին յայտարարութեամբ, Ապտալլա խոստացաւ օժանդակել պաղեստինեան իշխանութեան, որպէսզի ոտքի կանգնի:

Ապտալլա ըսաւ, որ ներքին հարցեր կան, գորս պէտք է լուծել: Ան աւելցուց, որ պաղեստինեան իշխանութիւնը ներկայիս ունի վարչապետ մը, որուն պէտք է օգնել կառավարութիւն մը կազմելու եւ աշխատանքները յառաջ մղելու համար: Յորդանանի զահակալ ըսաւ նաեւ, որ Միացեալ Նահանգներ այցելութեան նպատակներէն մէկն է խորհրդակցիլ ամերիկացի բարեկամներուն հետ Միջին Արեւելքի մէջ տիրակալ վերականգնելու եւ վարչապետութեան ալիքին վերջ տալու համար: Ան դիտել տուաւ նաեւ, որ միջազգային յաւելեալ ճնշումի կարիքը անհրաժեշտ է՝ երաշխաւորելու համար, թէ խնդրոյ յանարկայ լուր կողմերը կատարեն իրենց պատուարութիւնները:

Ապտալլա թագաւոր Հինգշաբթի օր հանդիպում պիտի ունենայ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշի հետ: Ան տեսակցութիւններ պիտի ունենայ նաեւ բարձրաստիճան այլ պաշտօնատարներու հետ: (ԱՅՓ)

ՍՈՒՐԻԱ – ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՆ ԿԱՊԵՐԸ Կ'ԱՍՐԱՊՆԴՈՒԻՆ

ԴԱՍՄԱԿՈՍ, 15 (ԱՅՓ).– Եւրոպական Միութեան արտաքին կապերու յանձնակատար Քրիս Փաթըն երկօրեայ այցելութեան մը համար Գամակոս ժամանեց Երկուշաբթի օր՝ արագացնելու համար բանակցութիւնները Սուրիա – Ե. Միութիւն ընկերակցութեան համաձայնութեան: Գամակոս ուղղուելէ առաջ, Փաթըն ըսաւ, որ անհրաժեշտ է արագացնել Գամակոսի հետ բանակցութիւնները, որպէսզի Սուրիա չդառնայ շրջանի մէջ միակ երկիրը, որ ցարդ համաձայնագիր չէ ստորագրած Ե. Միութեան հետ: Փաթըն տեսակցութիւններ պիտի ունենայ նախագահ Պաշար Ասատի եւ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէի հետ: Սուրիան եւ Ե. Միութիւնը 1998էն ի վեր ձեռնարկած են ընկերակցութեան համաձայնագիրի մը բանակցութիւններուն:

ԹԵՐԱՆԻ ՄԵՋ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ԴԱՐՁԵԱԼ ԹԻՐԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԻ

ԹԵՐԱՆ, 15 (ԱՅՓ).– Թեհրանի մէջ բրիտանական դեսպանատան բնակեցման մէջ համալիրը կրակոցներու թիրախ դարձած է Կիրակի յետմիջօրէին, այս ամիս իրանեան մայրաքաղաքին մէջ բրիտանական դիւանագիտական կեդրոնի մը մօտ նման երրորդ դէպքով մը:

Դեսպանատան մէջ բաները՝ Անտրի կրիսթոթ յայտնած է, թէ 2 փամփուշտներ արձակուած են համալիրին գլխաւոր դրան վրայ, աւելցրելով, որ մարդկային վնասներ չեն արձանագրուած:

Ան ըսած է, թէ կրակոցէն ետք հարցաքննուած են ակնատեսներ յայտնած են, որ մոթոսիքի թոփ մը տեղափոխուող 2 տղամարդիկ կրակած են:

Համալիրին մէջ կը բնակին դիւանագիտական անձնակազմի եւ անոնց ընտանիքներուն մեծ մասը:

Իրանի արտաքին գործոց նախարարութիւնը դատապարտած է դէպքը:

Թեհրանի կեդրոն գտնուող դեսպանատունը պիտեալներու կողմէ հարուած ստացած էր Սեպտեմբեր 3ին եւ Բրիտանիոյ արտաքին գործոց նախարարութիւնը արտօնած էր անձնակազմին ոչ կենսական անդամներուն եւ ընտանիքներու կամաւոր մեկնումը:

Այդ թուականէն ի վեր դեսպանատան աշխատանքները սահմանափակուած են:

Յարձակումները տեղի կ'ունենան մինչ Լոնտոնի եւ Թեհրանի միջեւ յարաբերութիւնները աստիճանաբար աւելի կը վատթարանան՝ Բրիտանիոյ մէջ անցեալ ամիս Արժանքինի մէջ Իրանի նախկին դեսպան Հատի Սուլեյմանփուրի ձերբակալութենէն ի վեր, Պուշինու Արեւի պահանջով:

Արժանքին վայն կ'ամբաստանէ 1994ին Արժանքինի մէջ իրական կեդրոնի մը ակնահարուածի մեղսակցութեամբ: Պայթումը 85 րոպէս տևեց:

Ուրբաթ օր ան պատարձակուած էր 1,16 միլիոն տոլար երաշխաւորագին վճարելէ ետք: Բրիտանացի դատաւոր մը յայտնած է, թէ յստակ փաստ գոյութիւն չունի ակնահարումին անոր մեղսակցութեան գծով:

ԻՐԱՆ ՅԱՆՁՆԱՌՈՒ ԿՐ ՄՆԱՅ ԷՆ. ՓԻ. ԹԻ.ԻՆ

Իրան լիովին յանձնառու կը մնայ կորիզային գէնքերու տարածումը արգիւղելու ֆի. թի. համաձայնագիրին, հակառակ իր առարկութիւններուն՝ Թեհրանի տրուած ժամկէտին, փաստելու համար, թէ կորիզային գէնքեր չի մշակեր, յայտնած է Իրանի փոխ նախագահ եւ կորիզային ուսման ինքի գործակալութեան պատասխանատու Ղուամրիզա Աղազատէ երէկ:

Ան վիեննայի մէջ կորիզային Ուսման Միջազգային Գործակալութեան ընդհանուր ժողովին ըսած է, թէ Իրան կը գիտակցի համաձայնագիրին առնչութեամբ իր պատասխանատուութիւններուն «ոչ միայն իր պարտաւորութիւններուն համար, այլ նաեւ կրօնական եւ բարոյական նկատառութիւններով»:

Գործակալութեան մօտ Իրանի դեսպան Ալի Աբպար Սալէհի շարժապարհը:

Յին յայտնած էր, թէ Իրան ՄԱԿի մարմինին հետ իր գործակալութիւնը վերատեսուցութեան ենթարկելու ընթացքի մէջ կը գտնուի եւ կրնայ նոյնիսկ քաշուել ինչ ֆի. թի. էն:

Աղազատէ ըսած է, թէ Իրան կը փորձէ միջոցներ գտնել համաձայնագիրին կապուած գործընթացը փրկելու համար, գիտել տալով, որ իր երկիրը գործակալութեան որոշումը ուսումնասիրելու ընթացքի մէջ կը գտնուի եւ քանի մը օրէն պիտի պատասխանէ անոր:

Ան շեշտած է, որ գործակալութեան հետ գործակալութիւնը պիտի շարունակուի եւ թէ Իրան պիտի շարունակէ բանակցիլ փրոթոգոլի մը շուրջ՝ առիթ տալու համար ՄԱԿի քննիչներու, որ կատարեն վարչարանակնկալութիւնները:

Մ. Նահանգներ Իրանը կ'ամբաստանեն գաղտնօրէն կորիզային գէնքեր

մշակելու յանցանքով:

Իրան կը հերքէ ասիկա:

Գործակալութեան ընդհանուր տնօրէնը՝ Մոհամէտ Պարասիի, ընդհանուր ժողովին բացումը կատարած է վերահաստատելով, թէ «կենսական է, որ անկախ բոլոր հարցերը կարելի եղածին չափ շուտ լուծուին»:

Իրանի բարձրաստիճան կղերական այսթոլա Հոսէյն Նուրի Համետանի երէկ Թեհրանի մէջ քննադատած է ՄԱԿի գործակալութեան կողմէ անցեալ Ուրբաթ օր որդեգրուած բանաձեւը, որ մինչեւ Հոկտեմբեր 31 պայմանաժամ կու տայ Իրանի փաստելու համար, որ կորիզային գէնքեր ձեռք ձգել չի փորձեր:

Բանաձեւը վաւերացուած էր Մ. Նահանգներու կողմէ յայտնած իր «լոպիկեկ» մը ետք:

(ԱՅՓ)

ԼԱԹՎԻՈՅ ՆԱԽԱԳԱՇԻՆ ԳԼԽԱԲՈՐԱԾ...

Շարունակուած Ա. Էջէն

Րաբերութիւններ, չըջանալի համագործակցութիւն՝ Հայաստան – Վրաստան – Ազգայնական եռակնի եւ Պաթեան երկիրներուն միջեւ, եւ Եւրոպական Միութեան հետ յարաբերութիւններու զարգացում:

Նախագահ Քոչարեանի համաձայն, անհրաժեշտ է, որ Եւրոպական Միութիւնը յստակացնէ Հարաւային Կովկասի նկատմամբ իր դիրքորոշումը: «Այսօր տեղի կ'ունենան քննարկումներ, բանակցութիւններ, եւ մենք կը ցանկանք, որ Հարաւային Կովկասը ընդգրկուի Եւրոպական Միութեան անմիջական շահերու գօտիին մէջ», դիտել տուաւ նախագահ Քոչարեան:

Երեւանի «Բոնկրէս» պանդոկին մէջ երէկ տեղի ունեցաւ հայ-լաթվիական գործարար խորհրդակցութիւնը, որուն ընթացքին հանդիսութեան մասնակցեցան նախագահներ Քոչարեան եւ Պապաս: Նախագահ Քոչարեան իր խօսքին մէջ դիտել տուաւ, որ Հայաստան շահագրգռուած է Լաթվիոյ հետ տնտեսական յարաբերութիւններու զարգացմամբ: Իր կարգին, Պապաս նշեց, որ երկկողմանի յարաբերութիւնները պէտք է հասցնել աւելի բարձր մակարդակի:

Լաթվիոյ նախագահին զխաւորած պատուիրակութիւնը երէկ այցելեց Հայաստանի Ազգային Ժողով, որ հանդիպում ունեցաւ Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արթուր Պաղտասարեանի, փոխ նախագահ Տիգրան Թորոսեանի, եւ Ազգային Ժողովի մշտական յանձնաժողովներուն եւ խմբակցութիւններուն ներկայացուցիչներուն հետ: Քննարկուեցան խորհրդարանական կապերուն, միջպետական յարաբերութիւններուն, տնտեսական համագործակցութեան, միջազգային կազմակերպութիւններու հետ գործակցութեան, չըջանալի խնդիրներու լուծման առընչուող բազմաթիւ հարցեր:

Լաթվիոյ նախագահը այցելեց նաեւ Երեւանի Պետական Համալսարան, ուր տեսակցութիւն մը ունեցաւ համալսարանի պատասխանական կազմին հետ:



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

ՀԻՐԱՄԱՆԻ ՇՐՋԱՆԱԽԻՆ ՎԱՐՋՈՒԹԻՒՆ

HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100 ԱՄԵԱԿ

ARAM KHATCHADOURIAN 100th ANNIVERSARY

Under The Patronage of H.E.

MR. GHAZZI AL ARIDI, Minister of Culture

ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ

Հայաստանի Պարարուեստի Պետական Անսամպլ

Գեղարուեստական Ղեկավար՝

Մովսէս Խորենացիի Անուան Շէֆանջանակիր՝

ՆՈՐԱՅՐ ՄԵՀՐԱՊԵԱՆ

THURSDAY 2 OCTOBER

SATURDAY 4 OCTOBER

2003

AT 8:30 PM IN UNESCO PALACE

Tickets on Sale:

BoxOffice Down Town, BHV Jnah

Hamazkayin Library Discotheque Geka

Studio Vatche Library Obelias Antelias

